ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939 – 13.03.1940), Ե., 2008, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 228 էջ, 57 լուսանկար:

Խորհրդա-ֆիննական պատերազմը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մասն է, տեղի է ունեցել 1939 թ. նոյեՍբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը: Արևմտյան պատմագիտության մեջ այն մտել է Ձմեռային պատերազմ անունով: Խորհրդային պատմագիտությունը տարիներ շարուն ակ մոռացության է տվել այդ պատերազմի գիտական ուսումնասիրությունը քաղաքական նկատառումով, քանի որ Երկրորդ աշխարհամարտն ավարտվելուց հետո Ֆինլանդիան ԽՍՀՄ-ին դաշնակից հարևան պետություն էր, որի հետ հաստատվել էին բարիդրացիական հարաբերություններ: Նշենք, որ Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Մոսկվայում 1941 թ. հրատարակվել է «Մարտերը Կարելյան պարանոցում» հոդվածների և ակնարկների ժողովածուն, իսկ հետպատերազմյան տարիներին այդ հիմնահարցին հպանցիկ անդրադարձներ կան Հայրենական մեծ և Երկրորդ համաշխարհային պատերազմների պատմության բազմահատորյակներում: Խորհրդա-ֆիննական պատերազմի որոշ հարցեր լուսաբանվել են նաև առանձին հեղինակների հուշագրություններում, Լենինգրադի զինվորական օկրուգի շտաբի պատմությանը և ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուում և այլն:
Խորհրդահայ պատմագիտությունը բոլորին չի զբաղվել Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմության և մասնավորապես այդ պատերազմին հայ ռազմիկների մասնակցության խնդիրներով: Սակայն Խորհրդային Միության հայ հերոսների մասին լույս տեսած գրքերում լուսաբանվել են առաջին չորս հայ հերոսների սխրանքներն ու կենսագրությունները, որոնք այդ բարձրագույն կոչմանն են արժանացել Խորհրդա-ֆիննական պատերազմում դրսևորած խիզախության համար:

Խորհրդային Միության փլզումից հետո ռուսական պատմագիտությունը սկսեց ակտիվորեն զբաղվել Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմության ուսումնասիրությամբ: Մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել մի շարք հեղինակների մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, որտեղ նորահայտ արխիվային փաստաթղթերի ու նյութերի հիման վրա լուսաբանվում էր պատերազմի քաղաքական պատմությունը, մեծ ուշադրություն էր դարձվում պատերազմի պատմության նախօրյակին Խորհրդային Միության և Ֆինլանդիայի միջև եղած հարաբերություններին, երկու երկրների միջև ծագած տարածքային վեճերի պատճառներին, ցամաքում, օդում և ծովում տեղի ունեցած մարտական գործողություններին, պատերազմի մասնակից երկու կողմերի բանակների
սպառազինության, հանդերձանքի, զենքի տեսակներին և այլն: Այդ աշխատությունն
երը սկզբնաղբյուր են դարձել պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի համար. նա դրանք օգտագործել է քննական մոտեցում ցուցաբերելով: Հեղինակը Խորհրդա-ֆիննական պատերազմում հակամարտող կողմերի կրած մարդկային կորուստների մասին արժեքավոր, հավաստի տեղեկություններ է քաղել հատկապես Ռուսաստանի Դաշնության զինված ուժ երի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Գ. Կրիվոշևի խմբագրությամբ 1993 թ. Մոսկվայում հրատարակված ««Գաղտնիության մակագիրը» հանված է. ԽՍՀՄ զինված ուժերի կորուստները պատերազմներում, մարտական գործողություններում և զինված ընդհարումներում» և նրա կազմած «Ռուսաստանը և ԽՍՀՄ-ը 20-րդ դարի պատերազմներում» (2001 թ.) վիճակագրական ուսումնասիրություններից:

Այնուամենայնիվ, հեղինակի քննության համար կարևոր աղբյուրագիտական հիմք են ծառայել Ռուսաստանի Դաշնության ռազմական, պետական, պաշտպանության նախարարության կենտրոնական և ռազմաբժշկական փաստաթղթերի, ինչպես նաև Հայաստանի ազգային արխիվների համապատասխան ֆոնդերի փաստաթղթերն ու նյութերը, հատկապես Խորհրդա-ֆիննական պատերազմում իրենց հերոսական սխրանքներով աչքի ընկած հայ ռազմիկների պարգևատրման թերթիկները, հայ հրամանատարների ղեկավարությամբ մարտնչած առանձին զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների պատմական տեղեկանքները, մարտական գործողությունների մատյանները, սպաների ու բժշկական աշխատողների անձնական գործերն ու նրանց ծառայողական ցուցակները, Խորհրդա-ֆիննական պատերազմում զոհված հայ մարտիկների մասին «Հուշամատյան» քառահատորյակում տեղ գտած տվյալները, ինչպես նաև պարբերա-
կան մամուլը: Բացի վերոհիշյալ աղբյուրներից, հեղինակը օգտագործել է նաև ՌԴ զինված ուժերի կենտրոնական և ՀՀ պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» ռազմապատմական թանգարանի համապատասխան նյութ երը:

Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցի լուսաբանման առումով գրախոսվող աշխատությունը առաջին փորձն է և նորություն է հայ պատմագիտության մեջ: Մենագրությունն ունի առաջաբան, երկու գլուխ, վերջաբան և ռուսերեն ամփոփում: Առաջաբանում հիմնավորապես ուսումնասիրված են հիմնահարցի արդիականությունը, հրատապությունը և գիտական նորությունը, որոշված՝ նպատակն ու խնդիրները, տրված՝ օգտագործված աղբյուրների և գրականության վերլուծությունը:

Առաջին՝ «Խորհրդա-ֆիննական պատերազմի ընդհանուր բնութագիրը» գլուխը, բաղկացած է երկու ենթագլուխներից: «Միջազգային դրությունը և պատերազմի պատճառները» ենթագլխում հեղինակը ընդհանուր ակնարկով տվել է ֆիննական պետության ստեղծման, Խորհրդա-ֆիննական տարածքային վեճերի և երկու երկրների միջև եղած դիվանագիտական հարաբերությունների պատմությունը, բացահայտել պատերազմի պատճառները: Երկրորդ ենթագլուխը՝ «Խորհրդա-ֆիննական պատերազմի համառոտ նկարագիրը» վերնագրով, լուսաբանում է Մաններհայմի պաշտպանական համակարգի, պատերազմող կողմերի ուժերի հարաբերակցության և պատերազմական գործողությունների ընթացքին վերաբերող հիմնահարցեր: Ձմեռային դաժան սառնամանիքների, լեռնանտա-ռային, ճահճային և ջրային բազմաթիվ բնական արգելքների պայմաններում 105 օր տևած արյունահեղ մարտերում խորհրդային զորքերին հաջողվում է մարդկային և նյութական մեծ կորուստների գնով ճեղքել «Մաններհայմի գիծը», ջախջախել ֆիննական բանակը, ազատագրել Վիբորգ, Կեկսհոլմ, Սորտավալա քաղաքները և այլն: Ֆինլանդիայի կառավարությունը ստիպված էր 1940 թ. մարտի 12-ին Մոսկվայում ԽՍՀՄ կառավարության հետ հաշտության պայմանագիր կնքել: Հաջորդ օրը պատերազմական գործողությունները դադարեցվեցին: Հաշտության պայմանագրի համաձայն՝ ԽՍՀՄ պետական սահմանները
Լենինգրադից հյուսիս ընդլայնվեցին ավելի քան 150 կմ: Խորհրդային Միությանն անցան ամբողջ Կարելյան պարանոցը՝ Վիբորգ, Կեկսհոլմ, Սուոյարվի, Սորտավալա քաղաքներով, Կուոլայստվիի շրջանը՝ կենտրոնական մասում, Սրեդնի և Ռիբաչի թերակղզիները՝ հյուսիսում և այլն:

Առաջին անգամ նորահայտ, գաղտնազերծված արխիվային նյութերի հիման վրա հեղինակը մերում է թվական տվյալներ, որոնք բացահայտում են ինչպես Խորհրդային բանակի, այնպես էլ ֆինների կրած կորուստները 105 օր տևած պատերազմում: Հեղինակն ընդգծում է այն միտքը, որ չնայած մարտի դաշտում կրած վիթխարի կորուստներին, խորհրդային ռազմիկները ձմեռային և բնակլիմայական ծանր պայմաններում, հատկապես «Մաններհայմի գծի» անառիկ

պաշտպանությունը ճեղքելիս ցուցաբերեցին արիության և տոկունության բազմաթիվ օրինակներ: Ավելի քան 50000 զինվոր ու սպա պարգևատրվեցին Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով, 412 խիզախների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հերոսներից 284-ը ռուսներ էին, 85-ը՝ ուկրաինացի, 13-ը բելոռուս, 4-ը՝ հայ, 3-ը՝ վրացի, իսկ ադոբեջանցի հերոս Խորհրդա-ֆիննական պատերազմում չի եղել:

Երկրորդ գլուխը կրում է «Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդաֆիննական պատերազմին» վերնագիրը: Այն բաղկացած է 7 ենթաբաժնից: Առաջինում լուսաբանված են Խորհրդային Միության առաջին 4 հայ հերոսների՝ տանկիստ, շարքային Կարապետ Սիմոնյանի, 7-րդ բանակի հրետանու պետ, դիվհրամ Միքայել Պարսեղովի, դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Գրիգոր (Գուրգեն) Հայրապետյանի և դասակի հրամանատարի օգնական, կրտսեր հրամանատար Իսահակ Մանասյանի սխրանքները, ինչպես նաև համառոտ կենսագրությունները: Երկրորդ ենթաբաժնում բացահայտված են Խորհրդա-ֆիննական պատերազմում Լենինի շքանշանով պարգևատրված 7 հայորդիների՝ 7-րդ բանակի հրետանու պետ, դիվհրամ Միքայել Պարսեղովի, հրետանային գնդի հրամանատար, գնդապետ Գարեգին Սահակյանի, մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Հայկ Ղազարյանի, 8-րդ բանակի հրետանու պետ,կոմբրիգ , կարսեցի Նիկոլայ Կլիչի, վաշտի հրամանատար, լեյտենանտ Զավեն Փափազյանի, լեյտենանտ Արտաշես Մինասյանի և Հակոբ Պողոսյանի սխրանքները:

Երրորդ ենթաբաժնում նկարագրված են Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցած այն հայորդիների սխրանքները, ովքեր հետագայում դարձել են մարշալներ, ծովակալներ ու գեներալներ: Նրանց թվում էին ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի 1-ին տեղակալ, 2-րդ կարգի ֆլագման Հովհաննես Իսակովը, որին հետագայում շնորհվեց Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում, 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար (հետագայում՝ գեներալ-մայոր) Քրիստափոր Ալավերդյանը, 19-րդ հրաձգային կորպուսի շտաբՀ պետ, գնդապետ Բագրատ Առուշանյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), 70-րդ հրաձգային դիվիզիայի կոմիսար, գնդային կոմիսար Բենիամին Գալստյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), 122-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ, գնդապետ Նիկոլայ Հովհաննիսյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), 2-րդ զենիթային-գնդացրային գնդի հրամանատարի՝ շարային գծով տեղակալ, մայոր Համազասպ Բաբաջանյանը (հետագայում՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ), 257-րդ առանձին սակրային գումարտակի դասակի հրամանատար, լեյտենանտ Սերգեյ Ագանովը (հետագայում՝ ինժեներական զորքերի մարշալ), հրետանային կորպուսի հրետանու պետ, գնդապետ Իվան Վեքիլովը (հետագայում՝ գեներալլեյտենանտ), միավորման շտաբՀ օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ Ստեփան Կինոսյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), հեծյալ գնդի հրամանատար, մայոր Բագրատ Իսահակյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), մարտկոցի քաղղեկ Պետրոս Չունչուզովը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), հրետանային գնդի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), հակատանկային մարտկոցի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Սերգեյ Նարինյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), և ուրիշներ:

Չորրորդ ենթաբաժինը նվիրված է Խորհրդա-ֆիննական պատերազմում Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով պարգևատրված հայ սպաների ու քաղաշխատողների սխրանքներին: Նրանց մեջ էին 358-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Աշոտ Մաթևոսյանը, գումարտակի հրամանատար, կա-

պիտան Միհրան Եղիազարյանը, գնդի շտաբի պետի տեղակալ, ավագ լեյտենանտ Զաքար Բաղդասարովը, հրետանային դիվիզիոնի հրամանատար, կապիտան Գևորգ Բաղդասարյանը, գնդի հրետանու պետ, կապիտան Վարդգես Հակոբյանը, վաշտի հրամանատար, լեյտենանտ ՀաIaμ ՀաIaμՍանը և ուրիշներ: Հեղինակը ներկայացնում է նաև այդ խիզախների մոռացված կենսագրությունները:

Հինգերորդ ենթաբաժինը գրված է նորահայտ արխիվային փաստերի հիման վրա. հեղինակը նկարագրել է շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հայ շարքային ռազմիկների ու սերժանտների սխրանքները, բացահայտել նրանցից շատերի կենսագրական տվյալները, առաջին անգամ տվել պատերազմում զոհված տասնյակ հայորդիների անուն-ազգանուններ՝ ըստ ծննդավայրերի:

Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում գրքի վեցերորդ ենթաբաժինը, որտեղ Կ. Հարությունյանը հավաստի փաստերի հիման վրա գրում է Խորհրդա-ֆիննական պատերազմում իրենց քաջագործություններով աչքի ընկած հայ օդաչուների սխրանքների մասին: Զմեռային պատերազմում շքանշանների արժանացած օդաչուներից էին ռմբակոծիչ ավիագնդի էսկադրիլիայի կոմիսար Սարգիս Հայրապետովը, ավագ օդաչու, ավագ լեյտենանտ Անդրանիկ Վարդանյանը, կրտսեր օդաչու, լեյտենանտ Գալուստ Բարթաղյանը, օդանավի հրամանատար, կապիտան Անդրեյ Ոսկանովը, կործանիչ օդաչու Լազար Չափչախովը, Սամսոն Մկրտումյանը (վերջին երկուսը Հայրենական մեծ պատերազմում արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման) և ուրիշներ:

Յոթերորդ ենթաբաժինը նվիրված է Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցած հայ բժիշկների աշխատանքի լուսաբանմանը: Նրանց թվում էին խորհրդային առողջապահության այնպիսի ճանաչված գործիչներ, ինչպիսիք էին Լևոն սոմելին, Ավետիք Բուռնազյանը, Արթուր Կյուչարյանցը, Ստեփան Կարճիկյանը, Տիգրան Ճառաքյանը (որոնք հետագայում ստացան բժշկական ծառայության գեներալի կոչում), Ալեքսանդր Հարությունյանը, Արամ Աբրահամյանը (վերջին երկուսին, ինչպես նաև Լ. սոմելուն և Ա. Բուռնազյանին հետագայում շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում) և այլք:

Վերջաբանում ամփոփված են ուսումնասիրության արդյունքները, որոնցից պարզվում է, որ Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցել է 16000 հայ, որոնցից շուրջ 2000-ը զոհվել է մարտերում: Այդ պատերազմում իրենց սխրանքն երով առավել աչքի ընկած չորս հայորդիներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման: Հետագայում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակից 12 հայորդիների նույնպես շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Ըստ հեղինակի բերած ամփոփիչ տվյալների՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության համար 6 հայորդիներ արժանացել են Լենինի, 30-ը՝ Կարմիր դրոշի, նույնքանն էլ՝ Կարմիր աստղի շքանշանների, ավելի քան 60-ը՝ «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալների:

Արժեքավոր է գրքի վերջում տրված ռուսերեն համառոտ ամփոփումը, որտեղ բերված են հետաքրքիր և ընդհանրացնող փաստեր Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ռազմիկների մասնակցության վերաբերյալ: Ցանկալի կլիներ, որ այդ ամփոփումը տրված լիներ նաև անգլերենով: Մի ցանկություն ևս. Գիրքը արժե հրատարակել նաև ռուսերեն: Այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, տպագրված է հրատարակչական բարձր ճաշակով և, անշուշտ, լայն արձագանք կունենա ընթերցող հասարակայնության կողմից: Միայն կարելի է ափսոսալ, որ այսպիսի արժեքավոր աշխատությունը լույս է տեսել ընդամենը 300 տպաքանակով:

ԳԵՂԱՄՅԱՆ Գ. Մ.

Պատմական գիտությունների դոկտոր